

լյանը, Եպարսոյա Բալարսեւյանը, Մանիկ Վարդանյանը և շատ ուրիշներ: Տպագրական ցեխի արտադրող բանվոր Հակոբ Շեկոյանը այժմ աշխատում է որպէս նույն ցեխի վարիչ: Բանվորներից առանձնակ որակյալ մասնագետներ են պատրաստել ցեխերի վարպետներ Լ. Ազիզբեկյանը, Մ. Կափյանյանը, Գ. Յումշաչեկչանը, Ս. Գլուղիեւյանը, Ա. Սուքիասյանը, Խաչիկ Բոլոյանը, Համբարձում Սիմոնյանը: Տպարանը ներկայումս լրիվ ազատված է մասնագիտացած որակյալ արտադրող բանվորներով:

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության

զարգացման լոթնամյա պլանով մեծ շափերով բնդարձակվելու և հրատարակչական աշխատանքների ծավալը: Յոթնամյակի վերջում Ակադեմիայի Հրատարակչությունը տպագրելու է 3500 մամուլ աշխատանք, 500 հազար օրինակ տպարանակով (1944 թ. 150 մամուլի և 1961 թ. 2100 մամուլի դիմաց): Այս թվերը մեր հրատարակչական աշխատանքի հետագա զարգացման ամենապերճախոս ասպարեզյունքն են:

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուսաստանում, մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեօլյուցիայի հաղթանակը, արխիվային գործի վրա քիչ ուշադրություն էր դարձվում: Գոյություն ունեցող արխիվները ջրբլած էին բազմաթիվ ու բազմադասի հիմնարկ-ձեռնարկությունների միջև և չկար մի արխիվային օրգան, որ զբաղվեր արխիվային նյութերի կենտրոնացման, միասնական պետական արխիվային ֆոնդ ստեղծելու և այն գիտականորեն մշակելու հարցերով:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռեօլյուցիայի հաղթանակից անմիջապես հետո Սովետական կուսակցությունը ազգայնացրեց և պետական հսկողության տակ վերցրեց ցարական Ռուսաստանի կենտրոնական և մյուս բոլոր արխիվները:

1918 թ. հունիսի 1-ին Վ. Ի. Լենինը ստորագրեց «Արխիվային գործի վերակառուցման և կենտրոնացման մասին» նշանավոր դեկրետը, որը դարձավ Սովետական Միության արխիվային շինարարության հիմքը: Համաձայն այդ դեկրետի, նախկինում գոյություն ունեցող կառավարական, ինչպես նաև առանձին գերատեսչությունների և հիմնարկ-ձեռնարկությունների արխիվները հայտարարվում են վերացված, իսկ այնտեղ պահվող բոլոր գործերը և փաստաթղթերն ու նյութերը կազմում են պետական միասնական արխիվային ֆոնդ: Այսպիսով, Սովետական Ռուսաստանի տերիտորիայում վերացվում էր հիմնարկության սեփականության իրավունքը իր արխիվի նկատմամբ, մի բան, որ հարյուրավոր տարիներ շարունակ գոյություն ունեւր նախառեօլյուցիոն Ռուսաստանում: Նոր դեկրետի համաձայն ինչպես նախառեօլյուցիոն շրջանի, այնպես էլ Հոկտեմբերյան սոցիալիս-

տական Մեծ ռեօլյուցիայից հետո ստեղծված հիմնարկ-ձեռնարկությունների արխիվները և այնտեղ կուտակված նյութերը հայտարարվեցին պետական սեփականություն:

Արխիվային շինարարության մասին հրատարակված լենինյան դեկրետը և արխիվները կարգավորելու գործում Սովետական Ռուսաստանում ձեռք բերված փորձն օգնեց Սովետական Հայաստանում ևս ձեռնարկելու արխիվային շինարարության աշխատանքներին:

1924 թ. մարտի 6-ին հրատարակվում է Հայաստանի Կենտրոնական ղեկընտար՝ Պետական Արխիվի հիմնադրման մասին. այն ամբողջությամբ հիմնված էր 1918 թ. հունիսի 1-ի «Արխիվային գործի վերակառուցման ու կենտրոնացման մասին» լենինյան հռչակավոր դեկրետի սկզբունքների վրա: 1924 թ. հոկտեմբերի 1-ին սկսվում է Հայաստանի Պետական Կենտրոնական արխիվի գործունեությունը:

Հայաստանում Պետական Կենտրոնական արխիվի հիմնադրումից հետո անհրաժեշտ էր լուրջ ջանքեր գործադրել Պետական միասնական արխիվային ֆոնդի մեջ ընդգրկելու Հայաստանի և հայ ժողովրդի պատմությանը վերաբերող բոլոր արխիվային նյութերը: Մա բազմազան ծանր և լուրջ գործ էր: Դարեր առաջ կորցնելով իր պետականությունը, հայ ժողովուրդը ջրվել էր աշխարհով մեկ և այդ պատճառով էլ նրա տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի մի շարք կարևորագույն կրեոլիսներ տեղի էին ունեցել Սովետական Հայաստանի այժմյան տերիտորիայից դուրս, հատկապես Ռուսաստանի քաղաքներում՝ Պետերբուրգում, Մոսկվայում, Աստրախանում, Նոր Նախիչևանում, ինչպես նաև հարավային Ուկրաին-

նայում (Լիվոլում, Կամեննո-Պոդոլսկում), Անգրերկովկասում (Քիֆլիսում, Բարվում, Ղարաբաղում), ապա նաև Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Զոուլայում, Կալկաթայում, Վենետիկում, Վիեննայում, Փարիզում, Լոնդոնում, Մանչեստրում և այլ վայրերում:

Հայաստանի արևելիկների աշխատողները հաղթահարելով դժվարությունները տարիների ընթացքում կարողացան Քիֆլիսում, Բարվում, Մոսկվայում, Լենինգրադում, Նոր-Նախիջևանում, Աստրախանում և այլ վայրերում հավաքել խոշոր բանակովյալ արհիվային նյութեր և հարստացնել արհիվային ֆոնդերը՝ հայ ժողովրդի պատմության վերաբերյալ հետաքրքիր վավերագրերով: Հետագա տարիների ընթացքում նյութերի կենտրոնացումը գնալով արագորեն աճում էր:

* * *

Հայկական ՍՍՌ Պետական Պատմական արխիվի նյութերը կենտրոնացված են 310 ֆոնդերում, որոնք արխիվային միավորների թիվը հասնում է 192181 դործի: Պատմական արխիվի ֆոնդերը գրեթե ամբողջությամբ առաջացել են Հայաստանի Ռուսաստանի հետ միավորելու ակտին հաջորդած մեկ հարյուրամյակի ընթացքում: Բացառություն են կազմում «Ամենայն Հայոց կաթողիկոսի Իրվան» և «Պարսկա-թուրքական ֆերմաններ» ֆոնդերը: Այդ երկու ֆոնդում պահվում են ամենահին վավերագրերը, որոնք ընդգրկում են շուրջ 300—350 տարվա ժամանակաշրջան:

«Ամենայն Հայոց կաթողիկոսի Իրվան» ֆոնդում գտնվող վավերագրերն ունեն շտիպանց կարևոր նշանակություն հայ ժողովրդի դարավոր պատմության ուսումնասիրության համար: Այստեղ պահվող հարուստ նյութերը պատկերում են պարսկա-թուրքական հարստահարչիների գործադրած վայրագությունները, հայ ժողովրդի մասսայական բնաջնջումն արլունարբու սուլթան Աբդուլ Համիդի կողմից, անգլո-ամերիկյան զաղութարարների սարքած դավերը և այլն:

Այդ ֆոնդում պահվող վավերագրերի մի խոշոր մասը վերաբերում է հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությանը: Ուշագրավ են այն բազմաթիվ նյութերը, որոնք պատմում են, թե ինչպես ռուս մեծ ժողովրդի օգնությամբ հայ ժողովուրդն ազատագրական պայքար էր մղում պարսկական ու թուրքական դաման լծի դեմ և թե ինչպես հայ ժողովուրդը խոշոր օգնություն էր ցույց տալիս ռուսաց զորքին, որը Հայաստանի հողի վրա պատերազմում էր թուրքիայի և Պարսկաստանի դեմ:

Բազմաթիվ կոնգոլներ և քեմեկ-ուսուլտողների ղեկուցադրեր ու նամակներ վերաբերում են դարոցների փոխմանը, եկեղեցական կալվածքների բռնագրավմանը, աշտիբուսական խռովություններին: **Նյութեր կան Կառավար գործիչներ Մ. Թադի-գյանին, Հ. Ալմազյանին, Կ. Պատկանյանին, Պ. Շահյանին, Բ. Կարա-Մուրզային և այլոց հալածելու, և լույս-ցյուն-գեմոկրատ Մ. Նալբանդյանին հետադրելու և դատապարտելու մասին: Ուշագրավ է մոսկվայական պրոպագանդի մի շարք գործիչների բողոքագիրը՝ «Հյուսիսափայլ» ամսագիրը դադարեցնելու ապօրինի որոշման կապակցությամբ:**

Հարուստ և բազմաբովանդակ են «Էջմիածնի. Հայոց Սինոդ» ֆոնդի նյութերը: Ֆոնդում եղած դասասանդակները վերաբերում են հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներին, այն էլ ոչ միայն բուն Հայաստանի, այլև աշխարհասփյուռ հայ գաղթավայրերի՝ Կալկաթայի, Մադրասի, Պարսկաստանի, Ռուսաստանի, Լեհաստանի, Բալկանների, Միջագետքի, Նիդրլանդների, Բուրբուրի և այլն: Մի շարք նյութեր լուսարանում են Էջմիածնի վանքապատկան-կալվածատիրական իրավունքների հետ կապված հարցերը, գյուղացիների շահագործման ձևերը, ինչպես նաև հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակը Ռուսաստանում, Թուրքիայում, Իրանում և այլ երկրներում:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի հայ գրողների, երաժիշտների, նկարիչ-քանդակագործների ինքնագիր վավերագրերը: Դրանց թվում են Պ. Պոռչյանի, Ղ. Աղայանի, Ռ. Պատկանյանի, Ս. Շահադիզի, Հ. Հովհաննիսյանի, Շիրվանզադեի, Վ. Փափազյանի, Կոմիտասի, Հովհաննես Այվազովսկու, Փ. Թերլեմեզյանի, Վ. Արիկյանի, Ս. Տեր-Մարտիրոսյանի, Միք. Միքայելյանի և շատ ուրիշների ինքնագիր նամակները, որոնցից պարզվում է նրանց նյութական վիճակը, ինչպես նաև հասարակական ու քաղաքական հայացքներն ու գործելակերպը:

Հին անցյալ ունեցող ֆոնդերի թվին է դասվում նաև «Հայոց Կոնստանտնուպոլիս» ֆոնդը (1706—1920): Այս ֆոնդում պահպանվել են մեծ քանակությամբ վավերագրեր, որոնք վերաբերում են հայ և ռուս ժողովուրդների բարեկամական կապերին և այն նյութական օգնությունը, որ Հյուսիսային Կովկասի ու Աստրախանի հայերը ցույց են տվել Ռուսաստանին 1812 թ. Հայրենական պատերազմի տարիներին և այլն:

Հայ ժողովրդի պատմության և առանձնապես վրացահայ հատվածի պատմության ուսումնասիրման համար հարուստ նյութեր են պահ-

պանվել «Վրաստանի և Իմերեթիայի Հայոց Վիճակային Կոնսիստորիա» ֆոնդում (1804—1920): Նյութերի մի մասը վերաբերում է Վրաստանի ճորտատիրական. կարգերին, ճորտերին դաժանորեն շահագործելուն, նրանց վաճառքի պայմաններին և այլն:

Հիշատակության արժանի փաստաթղթեր կան ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմներին հայերի ունեցած մասնակցության մասին՝ ռուսական բանակում և առանձին կամավորական շոկատներում, ինչպես և այն նյութական ու դրամական օժանդակության մասին, որը հայերը ցույց էին տալիս ռուսական զորքերին՝ Թուրքիայի և Իրանի դեմ մղած պատերազմներում:

Նյութերի բովանդակությամբ հարուստ է նաև «Երևանի Հայոց Վիճակային Կոնսիստորիան» ֆոնդը (1834—1919): Պահպանված օրագրերում պատմական կարևոր արժեք են ներկայացնում Սեմի գյուղացիության, բաղաբնիկ բնակչության կուլտուր-կրթական դրությունը, ինչպես նաև եկեղեցական և արքունի լազմապիսի հարկերի տակ հեծող գյուղացիների թշվառ վիճակին վերաբերող նյութերը:

«Նոր-Նախիջևանի Հայոց հոգևոր կառավարություն» ֆոնդի (1780—1925) առատ նյութերը բազմակողմանիորեն պարզաբանում են Նոր-Նախիջևանի հայ գաղտնի պատմությունը, ժողովրդի նիստ ու կացը, սովորությունները:

Հնագույն ֆոնդերի թվին է դասվում «Նոր-Նախիջևանի Հայոց քաղաքային Մագիստրատը» ֆոնդը (1780—1918): Նախիջևանի հայ գաղտնի պատմության, ժողովրդի կենցաղն ու սովորությունները բաղմակողմանի ուսումնասիրելու համար այդ ֆոնդում բավական վավերագրեր են պահպանվել: Մեծ բաժին են կազմում այն նյութերը, որոնք պատմում են հայերի Ղրիմից գաղթելու, Ն. Նախիջևան քաղաքն ու շրջակա գյուղերը հիմնադրելու, շրջապատի ճահճները շորացնելու, ամալի տափաստանը ծաղկեցնելու մասին: Կարևոր վավերագրեր են Եկատերինա II թագուհու կողմից Ն. Նախիջևանի հայերին տրված արտոնությունների ու առանձնաշնորհումների փաստաթղթերը:

Պատմական խոշոր արժեք են ներկայացնում այն վավերագրերը, որոնք ցույց են տալիս հայ ժողովրդի մասնակցությունը 1812 թ. հայրենական պատերազմին, ռուսական բանակին հայ բնակիչների օգնությանը զենքով, զինամթերքով, պարենով ու դրամական միջոցներով, ինչպես նաև փաստաթղթեր՝ Փրանսիական բանակի ջախջախման առթիվ Նախիջևանի հասարակության կազմակերպած միտինգների ու ստանահանդեսների մասին:

Հետաքրքրական են հնդկահայերի կառավարումների ձևերը բերձան, հասարակության կողմից Մ. Նալբանդյանին կալիքա ուղարկելու, Նալբանդյանի հաջող վերադարձի ու հաշվետվություն տալու համար ընդհանուր ժողով դուժմարելու, նրա բանտարկության, ներքին գործերի միջխտություն կազմած հատուկ հանձնաժողովի քննչական գործակալների, քաղաքագլուխ Կ. Հալապետյանին՝ որպես Նալբանդյանի կողմնակցի տնային բանտարկության ենթարկելու, Նալբանդյանի հանդիսավոր թաղման շուրջը ստեղծված հանձնաժողովի գործունեության վերաբերյալ փաստաթղթերը:

Պատմական արխիվի աչքի ընկնող ֆոնդերից է «Հայկական մարզի վարչությունը» ֆոնդը, որը ձևավորվել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելու հենց առաջին տարում (պահպանվել են 1825—1848 թթ. նյութերը): Այդ փաստաթղթերը պարզում են Երևանի մարզի վարչատնտեսական, քաղաքական, կուլտուր-կրթական, ֆինանսական, քաղաքացիական, հողային ու հարկային հարաբերությունները: Բազմաթիվ վավերագրեր պատմում են պարսից խաների տիրապետության տակ հայ ժողովրդի կրած անասելի զրկանքների ու հարստահարությունների, հարկահան սատրապների կատարած վայրագությունների մասին:

«Երևանի նահանգային վարչությունը» ֆոնդում (1850—1918) անսպառ տեղեկություններ կարելի է գտնել Երևանյան նահանգի վարչատնտեսական կառուցվածքի, հողային ու ջրային ռեսուրսների, ազգաբնակչության նյութական պայմանների, գյուղացիության շահագործման, կուլտուր-կրթական և առողջապահական ոլորտների դրության, ծայր հետամնացության, ներքին և արտաքին շահագործողների, ցարական պաշտոնյաների կամայականությունների և, վերջապես, ռուսացիներ գործիչներին հետապնդելու մասին:

Կարևոր ֆոնդերից է «Երևանի պետական պալատը» ֆոնդը (1825—1921): Այստեղ վիճակագրական հարուստ տվյալներ կան Արևելյան Հայաստանի քաղաքների, շրջանների, գյուղական ավանների, նրանց հողային, ջրային տարածությունների, մշակող կուլտուրաների տեսակների, փոխադրական միջոցների, բնակչության քանակի, քաղաքային ու գյուղական արդյունաբերական օբյեկտների ու նրանց կարողության մասին:

Հարուստ ֆոնդերի թվին են պատկանում «Երևանի նահանգի և Գարսի մարզի հողագործություն և պետական գույքերի վարչությունը» (1827—1918) և «Երևանի նահանգի շինականների գործերի ատյանը (1871—1919) ֆոնդերը:

Դրանցում արտացոլված են Արևելյան Հայաստանի հողային հարաբերությունների հետ կապված բազմապիսի հարցերը: Բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ են պահպանվել երկրի ընդերքի՝ հանքային հարստությունների հետազոտման ու շահագործման մասին:

Պատմական արխիվի ուշագրավ ֆոնդերից են «Երևանի գավառային դատարանը» (1823—1854), «Երևանի օկրուգային դատարանը» (1840—1921) և «Թիֆլիսի դատական պալատը» (1879—1919) ֆոնդերը: Նրանցում պահպանվող փաստաթղթերը լույս են սփռում Հայկական մարզի, Երևանյան նահանգային վարչության դատա-իրավական մարմինների ողջ գործունեության վրա: Հետաքրքրական են նաև հողային մարմինների, քննչական մասի աշխատողների կաշառակերությունների, աշխատավոր գյուղացիներին հողազրկելու, ըմբոստացողներին ահաբեկելու և պատժելու, ընտրական իրավունքներից զրկելու մասին եղած փաստաթղթերը:

Նախատվետական շրջանի Երևան և Ալեքսանդրոպոլ քաղաքների պատմությունն ուսումնասիրելու համար հատուկ կարևորություն են ներկայացնում «Երևանի քաղաքային վարչություն» (1861—1920) և «Ալեքսանդրոպոլի քաղաքային վարչություն» (1886—1921) ֆոնդերը: Երևան, Ալեքսանդրոպոլ և Նոր-Բայազետ քաղաքների հասարակական, տնտեսական, քաղաքական կյանքի պատմության ուսումնասիրության համար առատ նյութեր կան «Երևանի նահանգի քաղաքային գործերի ատյան» (1887—1918) ֆոնդում: Այդտեղ արձանագրություններում, զեկուցումներում, հաշվետվություններում տվյալներ կան քաղաքների պլանավորման, եկամուտների, պատղամավորների ընտրությունների, կուլտուրական, հասարակական հիմնարկների և ընկերությունների գործունեության վերաբերյալ:

Երևանյան նահանգի հասարակական, քաղաքական, տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրման գործում առանձին արժեք են ներկայացնում «Կովկասյան փոխարքայի գրասենյակ» (1878—1917), «Երևանի նահանգապետի գրասենյակ» (1868—1917), «Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչություն» (1884—1917) և «Երևանի նահանգի ժանդարմական վարչություն» (1905—1917) ֆոնդերի նյութերը, որոնք վերաբերում են երկրի տնտեսական պայմաններին, հողային ու ջրային վեճերին, բնական պատահարներին, հարկային ծանր պայմաններին, արդյունաբերական օբյեկտներին, կալվածատեր-կուլակային տարրերի արտոնություններին, նահանգային եկամուտների հաշ-

վուման, եկեղեցական ծխական դպրոցների փակման, եկեղեցական կալվածքների բռնագրավման և այլ հարցերին:

Չափազանց կարևոր են ռուսացիոն շարժումների աճի ու տարածման, բանվորական գործադուլների, ուսանողական խռովությունների, թուրքիկ տարածողների, գյուղացիական հուզումների և նրանց կանխման միջոցների մասին եղած նյութերը: Մեծ թիվ են կազմում հասարակական, քաղաքական ու պրոպագանդ գործիչները՝ Աղայանի, Շիրվանզադեի, Ասրրպետի և ուրիշների բանտարկմանն ու հետաքննմանը, Կրետյանի, Կուկունյանցի և այլոց դատապարտմանը վերաբերող փաստաթղթերը:

Հայաստանում պղնձի արդյունաբերության զարգացման պատմության ուսումնասիրության կարևոր աղբյուր է հանդիսանում «Կովկասի արդյունաբերական և մետաղագործական ընկերություն» ֆոնդը (1886—1920): Պահպանված փաստաթղթերում կարևոր տեղեկություններ կան «Ալաբալայի հանքերի ֆրանսիական ալյուրիտերական ընկերության», «Շահալի-էլչյար ընկերության» գործունեության, ֆրանսիական կապիտալիստների կողմից հանքային հարստությունների շահագործման բարբարոս ձևերի, բանվորների դաժան շահագործման, ինչպես նաև 1905—1907 և հետագա տարիներում բռնկված գործադուլների և բանվորների նկատմամբ կիրառված դատաստանի մասին:

Նախատվետական դպրոցների պատմությունը բազմակողմանի ուսումնասիրելու համար անսպառ նյութեր կան Երևանյան նահանգի 26 ուսումնական հաստատությունների ֆոնդերում: Բավականանալ դրանցից երկուսի բնութագրմամբ: «Երևանի արական դիմնադիան», որը հայտնի է նաև Երևանի գավառային դպրոց անունով, հիմնադրվել է 1831 թ.: Հայկական մարդի կազմակերպման առաջին բարերար գործը եղել է հիշյալ դպրոցի պաշտոնական բացումը, որը կոչված էր դաստիարակելու հայկական նորաստեղծ մարզի տարբեր ազգերի երեխաներին՝ նրանց մեջ սերմանելով սուս մեծ ժողովրդի կուլտուրան: Ուշադրով է հատկապես 1843—1848 ուսումնական տարեշրջանը, երբ դպրոցը ղեկավարել է հայ մեծ լուսավորիչ, հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանը: Երևանի գավառական դպրոցում Աբովյանի տեսչության հինգ տարիներին վերաբերող փաստաթղթերը, որոնք մեծ մասամբ զրկված են Աբովյանի ձեռքով, չափազանց արժեքավոր են:

Դպրոցական գործը լուսաբանող մյուս կարևոր բաժինը «Ներսիսյան հայոց ազգային հոգևոր դպրոց» ֆոնդն է, դպրոցը հիմնադրվել է 1822 թ. և գործել է շուրջ մեկ դար: Դպրոցի

տուաչին շրջանավարտների թվում են եղել Խաչատուր Աբովյանը, Ստեփանոս Նազարյանը և ուրիշները: Կարևոր վավերագրեր են պահպանվել այդ դպրոցի ուսանողական ընդվզումների, դասադուլների ու խռովությունների մասին: Ներսիսյան դպրոցի դործերում պահպանվել են փաստաթղթեր, որոնք վերաբերում են նշանավոր մանկավարժներ Պետրոս Ծանշյանի, Սեդրակ Մանգինյանի, Ղազարոս Աղայանի և այլոց գործունեությանը:

Անձնական արխիվներից շահագանց հետաքրքրական են Հ. Լազարյանի, Սա. Գյուլիշամբարյանի, Հովհաննիսյանի (Քուչուկ), Ս. Մանդինյանի, Հ. Սուրբաթյանի և Խ. Վերմիշևի ֆոնդերի նյութերը: Վավերագրերում պատկերված են հայ ժողովրդի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների բարեկամական դարավոր կապերը, նրանց եղբայրական համագործակցությունը և կուլտուրական փոխներգործունեությունը: Առանձնապես ցույց է տրված ուսու մեծ ժողովրդի նկատմամբ տածած սերը:

Այստեղ հարկ ենք համարում նաև նշել, որ մեր սեպուղիների դիտական ու կուլտուրական մի շարք հաստատություններում պահվում են նախասովետական շրջանին վերաբերող նյութեր, որոնք փաստորեն անմիջական մասն են կազմում Պետական կենտրոնական Պատմական արխիվի ֆոնդերի:

Այսպես, Արվեստի և գրականության թանգարանում են դտնվում «Մշակ» թերթի, Համբարձում Առաքելյանի, Գյուլտ քահանա Աղանյանի, Լազարյան ձեմարանի, Հայոց Ազգագրական ընկերության, Սանասարյան վարժարանի, Գրիգոր Խալաթյանի, Աբգար Հովհաննիսյանի, Գրիգոր Արծրունու, Տիգրան Նազարյանի, Բագրատ Նավասարդյանի, Միրտիչ Էմինի, Պետրոս Միմոնյանի և բազմաթիվ այլ հայ գործիչների ֆոնդերը: Հանրային գրադարանում՝ Կորգանովի, Կարինյանի և այլոց արխիվները: Պատմական թանգարանում՝ Ազգագրական ընկերության արխիվը և մի շարք պատմական կարևոր վավերագրերի ինքնագրերը: Երևան քաղաքի թանգարանում՝ «Երևանի քաղաքային վարչության» ֆոնդի որոշ միավորներ և այլ թղթեր: Պետական ձեռագրատանը (Մատենադարանում)՝ Լազարյան ձեմարանի, Ներսես Աշտարակեցու, Ալեքսանդր Երիցյանի, Մսերյանների արխիվային նյութերը: Հայ ժողովրդի պատմությանը վերաբերող բավական նյութեր դեռ պահվում են Թրիխիի, Բաքվի, Մոսկվայի, Լենինգրադի արխիվներում:

Ինքնին հասկանալի է, որ այս համառոտ տեսությունը չի ընդգրկում Պատմական արխիվի բոլոր նյութերի ֆոնդերը: Արխիվային ֆոն-

դերը բազմաբովանդակ լինելով, իրենց մեջ անսպառ նյութեր են պարունակում և ուսումնասիրողների համար հստակիսանում են մեծ շտեմարան:

* * *

Հոկտեմբերյան սեպուղիայի և սոցիալիստական շինարարության Պետական կենտրոնական արխիվը մեր սեպուղիների հարուստ և լավագույն արխիվներից մեկն է: Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո փաստորեն հիմք է դրվում այդ արխիվի նյութերի հավաքման ու կենտրոնացման գործին և երկրտանամյակների ընթացքում մեծ խնամքով հավաքվում ու մշակվում են սովետական շրջանի պատմությանը վերաբերող արխիվային գործերը: Այժմ Հոկտեմբերյան սեպուղիայի և սոցիալիստական շինարարության Պետական կենտրոնական արխիվում կենտրոնացված են 410 ֆոնդեր, որոնք պարունակում են 197007 արխիվային միավոր:

Ամենաուշագրավ և կարևոր ֆոնդերից առաջինը հանդիսանում է «Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ» (Ժողկոմխորհ) ֆոնդը (1920—1945), որն աչքի է ընկնում ոչ միայն նյութերի առատությամբ, այլև պահպանված փաստաթղթերի բազմապատկանությամբ ու կարևորությամբ: Այդ նյութերն արտասցրում են մեր սեպուղիների արդյունաբերության, գյուղատնտեսության, արվեստի ու գրականության, լուսավորության, առողջապահության պատմությունը: Կարևորագույն ֆոնդերից է «Ժողովրդական տնտեսության խորհուրդ» (Ժողտնխորհ) ֆոնդը (1921—1927):

Հարուստ նյութեր են պահպանվել մասնավոր ձեռագրությունների (գործարանների, հանրահորերի, ջրաղացների, գինգերի, արհեստանոցների և այլն) ազգայնացման, նրանց գործարկման ու շահագործման ձեռքի, արտադրանքի թողարկման, հումույթի մշակման և այլնի մասին: Առանձնահատուկ պատմական արժեք են ներկայացնում Հայաստանի գինեգործության, կաշվի արդյունաբերության, Ալավերդու և Ջանգեղուրի պղնձահանքերի վերականգնման և հանքահորերի արտադրության կազմակերպման, հանրային հետազոտությունների և Հայաստանի տնտեսության զարգացման վերաբերյալ բազմաթիվ տեղեկագրերն ու գեղարվեստական ֆոնդում եղած կարևոր փաստաթղթերից է ազգայնացված ձեռագրությունների ցուցակը՝ իրենց նախկին տերերի անուններով հանդերձ:

Հայաստանում Սովետական կարգեր հաստատվելու տուաչին իսկ օրից երկիրը ղեկավար-

րելու համար ստեղծված հեղիմների ֆոնդերում պահվել են բազմաթիվ ղեկընտներ, որոշումներ, շրջաբերականներ, հրահանգներ ու հրամաններ: Փոնդերում պահպանված փաստաթղթերում ցույց է տրված Հայաստանի հեղիմների մզած պայքարը հակահեղափոխական դաշնակ-ավանաշուրխների բանդաների դեմ: Նյութեր կան կուլակային տարրերի ճնշման ու նրանց իրավունքների սահմանափակման, չբավոր ու աշխատավոր գյուղացիությանը ցույց տրված օժանդակության մասին: Պատմական կարևոր արժեք են ներկայացնում բանվորների և աշխատավոր գյուղացիների կողմից բնդունված բազմաթիվ բանաձևերն ու համախոսականները՝ Սովետական իշխանության ամրապնդման, բայքայված երկրի վերականգնման և արդյունաբերության զարգացման գործին իրենց ուժերն ի սպաս դնելու մասին: Հետաքրքրական է Քալինի շրջանի ստեղծիչների ու մշտիչների ներկայացուցիչների՝ Ս. Կասյանին հղած հեռագրերը, որով նրանք ողջունում են Սովետական կարգերի հաստատումը:

Զարգացուցիչ ու բաժանելի են դաշնակ մատուցիտ-մարդասպանների փետրվարյան ավանաշուրջի ժամանակամիջոցում կատարած գաղանուխները: Հարյուրավոր փաստաթղթերում բացահայտվում է հայ ժողովրդի սիներիմ թշնամիների՝ դաշնակների դեմքը, որոնք երկրից դուրս քշվելու պահին Բաշաբազում և այլ վայրերում ժողովրդին տրորում էին ձիերի օմրակների տակ, գաղանաչին դատատան էին տեսնում աշխատավոր գյուղացիների հետ:

Զափազանց կարևոր են այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են հայ և ռուս ժողովուրդների բարեկամական կապերին, Սովետական Ռուսաստանի նյութական ու բարոյական աջակցությանը՝ Հայաստանի վերականգնման գործին:

Հայաստանում Սովետական կարգերի հաստատման առաջին 5-6 տարիներին ժողովրդի տևտևական, բուրբախան միճակը պատկերելու համար հարուստ նյութեր են պահպանված հետևյալ շորս ֆոնդերում. «Ալեքսանդրոպոլի Գավառային Գործադիր Կոմիտե», «Զանգեզուրի Գավառային Գործադիր Կոմիտե», «Նրևանի Գավառային Գործադիր Կոմիտե», «Նրևանի Գավառային Գործադիր Կոմիտե»: Հատկապես ուշագրավ են Ալեքսանդրոպոլի դավադրածի ֆոնդի նյութերում պահվող՝ գավառի բնակչության դիմումներն ու կազմած տեղեկագրերը, որոնցում նկարագրված են քեմալական զորքերի կատարած գաղանուխները, բնակչությանը խոշտանգելը և անխնա սպանելը, ողջ

ունեցվածքը թալանելը, տները քանդելը և այլն:

Հոկտեմբերյան ռեզոլուցիայի և սոցիալիստական շինարարության արիսիփի կարևորագույն ֆոնդերից է «ՀՍԽՀ Լուսավորության ժողովրդական Կոմիտարիս» ֆոնդը: Այստեղ պահպանված են բազմաթիվ նյութեր ուսուցիչական կուլուր-լուսավորական գործի կազմակերպման, դպրոցական շինարարության, շենքերի կառուցման, անգրագիտության վերացման, խրճիթ-բնակարանների, մանկատների, ակումբների ու դրադարանների, կինո-թատրոնների, պիտենբրական կազմակերպությունների, մանկական գաղութների ստեղծման, անսպաստանության դեմ պայքարելու, գյուղական ուսուցիչների արտոնությունների, նրանց կենցաղի բարելավման, կենսաթոշակների հատկացումների, բարձրագույն կրթության, համալսարանի, կոնսերվատորիայի, բնադիտական, պատմական, ազգագրական, մանկավարժական թանգարանների կազմակերպման, ուսուցիչների սուսջին Համահայաստանյան համագումարի և Երևանի ու Էջմիածնի գավառների դպրոցական աշխատողների համագումարի մասին:

Մեծ թվով փաստաթղթեր վերաբերում են այն միջոցառումներին, որոնք նպատակ ունեն գիտության, դրականության, արվեստի ծաղկմանը: Հատուկ ուշագրություն էր դարձվում գիտության, դրականության, արվեստի, հասարակական ու քաղաքական գործիչների կենցաղի բարելավմանը (օրինակ, Հակոբ Հակոբյանի հոբելյանի կատարմանը, Գ. Սունդուկյանի ծննդյան հարյուրամյակի տոնակատարությանը, Ս. Եահանգյուրի, Ղ. Աղաջանի գործունեությանը, քանդակագործ Ա. Տեր-Մարտիրոսյանի ստեղծագործություններին, Կոմիտասի ձեռագրերը և Պոլսից և Քերկեսեղյանի նկարած Կոմիտասի մեծագիր հուշանկարը Փարիզից Հայաստան փոխադրելուն, Միլանում բացվելիք նկարիչների միջազգային ցուցահանդեսին շնորհալի արվեստագետներ ուղարկելուն, կոմպոզիտոր Ա. Սպենդիարյանի Հայաստան գալուսն և բազմաթիվ այլ հարցերին վերաբերող նյութերը):

Փոնդերում կան նաև մի շարք ունիկալ և արժեքավոր վավերագրեր: Դրանցից է, օրինակ մեծ բանաստեղծ Հովհ. Քումանյանի 1922 թ. մայիսի 17-ի նամակը, որի մեջ խնդիր է դրվում հայոց լեզվի նոր ուղղագրության հարցը գիտական ողջ հասարակագիտության բնությունը ներկայացնելու մասին, նշանավոր կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի՝ Հայաստանի Ինկոմիսի հղած գրությունը, որտեղ պրվում է Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայ երա-

ժիշկների կատարած աշխատանքների վարձարության հարցը, բանաստեղծ Նղիշ Չարինցի խնդրագիրը՝ Խատերական-հրաժշտական խմբեր կազմակերպելու մասին:

Արժեքավոր ֆունդերից է «Երևանի Պետական համալսարան» ֆունդը: Պահպանվել են Երևանի նախկին Ժողովրդական համալսարանը վերանվանելու և Պետական համալսարան կոչելու մասին (1924 թ.) և նյութեր՝ նոր ֆակուլտետների ստեղծման, վերակազմման ու գործունեության մասին: Փոնդում կան վիճակագրական կարգի տեղեկություններ պրոֆեսորա-դասախոսական, վարչա-անտեսական աշխատողների և ուսանողական կազմի ու քանակի, լաբորատորիաների կազմակերպման ու կահավորման վերաբերյալ: Կան բազմաթիվ գրագրություններ արտասահմանյան գիտական գործուղումների, «Միլլիոնյան ֆոնդի», սուսմանական ծրագրերի, դասախոսների հրավիրման, նշանակումների, ընդունելությունների մասին:

Կարևոր ֆունդերից է նաև «Հայաստանի պետական հրատարակչություն» (Հայպետհրատ) ֆունդը: Պահպանվել են Հայպետհրատի կանոնադրություն (1925 թ.), նրա գործունեության վերաբերյալ կազմված զեկուցագրերը, անձնական կազմի հրամանագրերը, աշխատակիցների ցուցակները:

Առանձին հետաքրքրություն ունի «ՀՍԽՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիտեի» ֆունդը: Այստեղ եղած փաստաթղթերը պատմական, հասարակական, գիտական ու քաղաքական կարևոր արժեք են ներկայացնում: Փաստաթղթերում շոշափված են բազմաթիվ հարցեր, դրանցից առավել կարևոր են Բաթումում, Փարիզում, Սևրում և այլ վայրերում վարված բանակցությունների նյութերը, Սովետական Ռուսաստանի և Անգրիվկայան օեսպուրիկաների ու Թուրքիայի միջև կնքված պայմանագրերը և այլն: Զափազանց կարևոր են այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են Հայաստանի օկուպացիայի շրջաններում թուրքերի կատարած դադանություններին, Կարսի կոնֆերանսի հրավիրման, գաղթականների ու Թուրքիայում գտնվող հայ գերիների վերադարձման, ամերիկյան միսիայի աշխատողների հակասովետական գործունեության, օտար երկրների հետ դիվանագիտական ու առևտրական կապերի զարգացման հարցերին և այլն:

Հայկական ռեսպուբլիկայի արդյունաբերության վերաբերյալ առատ տեղեկություններ են պարունակում հետևյալ ֆունդերը. «Պետական պլանային հանձնատնօր» (Պետպլան), «Գինուկանյակի «Արարատ» տրեստ», «ՀՍԽՀ Կենտրոնական վիճակագրական վարչություն» (Կենտ-

վիճվար), «Հայկական ՍՍՌ Տեղական արդյունաբերության ժողովրդական կոմիտեի» (Հայկական ՍՍՌ Թեխն. արդյունաբերության ժողովրդական կոմիտեի) և այլն: Պահպանված նյութերը վերաբերում են էլեկտրակայանների, տեքստիլ-բամբակաղտիչ, ձևի, օճառի, դարչիչի, կրի, թղթի, կաշվի, կլմիկների, պանրի, գինու-կոնյակի, կոնսերվի, մետաքսի, մեքենաշինական և այլ գործարանների կառուցմանը, հանքահորերի վերակառուցմանը, Ալավերդու և Ղափանի պղնձահանքերի շահագործման հնգամյա պլաններին, ջրանցքների, կամուրջների, ճանապարհների կառուցումներին, մետաքսի արդյունաբերության աշխատանքներին, պլիգրաֆ արդյունաբերության, տնայնագործության զարգացմանը, մետաղամշակությանը, տեքստիլ և կաշվի արդյունաբերությանը, Փարիզի միջազգային ցուցահանդեսին մասնակցելուն, գյուտարարական աշխատանքներին, ստրեբկրյա ջրերի հետազոտմանը, գրոսայգիների ու շինարարական օբյեկտների նախագծումներին և բազմաթիվ այլ հարցերի:

Հոկտեմբերյան ռեպուբլիկայի և սոցիալիստական շինարարության Պետական Կենտրոնական արխիվի նշանավոր ֆունդերից են «ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր կոմիտեի» (Կենտգործկոմ) և «Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետ» ֆունդերը: Այստեղ կենտրոնացված հարուստ ու բովանդակալից փաստաթղթերը վերաբերում են բազմաթիվ հարցերի, որոնցից թվարկենք մի քանիսը. հողարտաժամումները, հողային շինարարության աշխատանքները, հողազուրկ գյուղացիներին հող հատկացնելու հարցեր, կուլակային ու շահագործող տարբեր հարկումներ, անապատան երիտանների խնամք, ներդաշնակների տեղավորում, կարմիրանական լինների և կարմիր պարտիզանների ընտանիքներին սված արտոնություններ, ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքներ, քոչվորական անտեսությունների մեջ տարվող աշխատանքներ, խորհուրդների համագործակցության ու նստաշրջանների գումարման հետ կապված հարցեր, Հայաստանի վարչական բաժանումների հարցեր, կարկտահարման ու հեղուկումների դեմ ձեռնարկվող միջոցառումներ, թոշակների ու նպաստների հատկացումներ, Լենինականի երկրաշարժի հետևանքով վնասված ռայոնների վերականգնման ու քաղաքի վերաշինության հետ առնչվող հարցեր, Սովետական քաղաքացիություն ընդունելու, ներումներ շնորհելու, «Աշխատանքի հերոսի» կոչումներ շնորհելու, պատվոգրի ու շքանշաններ տալու հարցեր, գիտություն, գրականություն, արվեստի և այլ բնագավառների նշանավոր գործիչների պարգևատր-

րումներ, կոշումներ շնորհելու և հորելլանների կատարման մասին որոշումներ:

Սովետական Հայաստանի արհեստակցական միությունների պատմությունն ուսումնասիրելու համար առատ նյութեր են կուտակված «Հայաստանի արհեստակցական միություն» (ՀԱՄԽ) ֆոնդում և արհմիություններին վերաբերող ուրիշ 14 ֆոնդերում:

Ռեսպուբլիկայում կոոպերացիայի ստեղծման ու զարգացման, առևտրի ցանցի գործունեության ուսումնասիրման ուղղությամբ հարուստ նյութեր կան «ՀՍԽՀ կոոպերատիվների միություն» (Հայկոոպ) և կոոպերացիայի մյուս նյութերին վերաբերող բազմաթիվ ֆոնդերում: Արխիվային փաստաթղթերը վերաբերում են բնակչությանը կոոպերատիվ միության մեջ ընդգրկելուն, կոոպերատիվ կազմակերպությունների հարկային արտոնություններին, մասնավոր կապիտալի սահմանափակմանը, գյուղատնտեսական մթերքների կոնտրակտացիային, ապրանքային ու դրամական շրջանառության կարգավորմանը, ալոբգործական, գինեգործական, մեղվաբուծական, շերամապահական, քամբակագործական ընկերությունների գործունեությանը, Հայաստանի կոոպերացիայի շինարարությանն ու զարգացմանը, արտասահմանյան երկրների հետ առևտրական հարաբերությունների զարգացմանը, միջազգային կոոպերացիայի տնտեսաարտադրություններին և այլ հարցերի:

Հայաստանի գյուղատնտեսության վիճակի պատկերման, սովխոզների հիմնադրման ու զարգացման գծով արխիվում պահվում են ՀՍԽՀ Հողագործության ժողովրդական կոմիտատի (Հողժողկոմատ) և տասնյակ սովխոզների ֆոնդերի բազմաճազար գործերը: Վերոհիշյալ ֆոնդերում պահվող նյութերը վերաբերում են գյուղատնտեսության բնագավառի բոլոր ճյուղերին:

Ռեսպուբլիկայի շինարարական օբյեկտների գործունեության վերաբերյալ հետաքրքրական փաստաթղթեր են պահվում շինարարական տրեստների ու շինարարական գրասենյակների բազմաթիվ ֆոնդերում, որտեղ պահվող փաստաթղթերը վերաբերում են շինարարական օբյեկտների նախագծումներին, նորաշին-Ղամարյու շրմուղին, Հոկտեմբերյանի կոնսերվի, Սպիտակի շաքարի, Սրեանի մահուղի և այլ գործարանների կառուցումներին, հիվանդանոցների, դպրոցների, մանկապարտեզների, մանկատնայինների, աղուբների ու բնակելի շենքերի կառուցումներին և այլ հարցերի:

Հայկական ՍՍՌ Պետական կենտրոնական արխիվների թվին է պատկանում նաև ֆոտո-

ֆոնդ-կինո փաստաթղթերի արխիվը: Այն կազմակերպվել է 1943 թ. և նպատակ ունի հավաքել ու պահպանել ռեսպուբլիկայի հիմնարկ-ձեռնարկություններում գոյացող ֆոտո-ֆոնդ-կինո փաստաթղթերը և, որ գլխավորն է, դրանք ի սպաս ընել մեր երկրի ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի զարգացման շահերին:

Հայկական ՍՍՌ ֆոտո-ֆոնդ-կինո փաստաթղթերի Պետական կենտրոնական արխիվում կենտրոնացված են մեծ քանակությամբ պատմական, քաղաքական ու գեղարվեստական արժեք ներկայացնող լուսանկարչական փաստաթղթեր:

* * *

Հոկտեմբերյան ռեյուցիայի և սոցիալիստական շինարարության Պետական արխիվին իր բնույթով շատ մոտ է կանգնած մեր ռեսպուբլիկայի շատ հարուստ և լավագույն արխիվները մեկը՝ Հայաստանի Կոմունիստական Պարտիայի կենտկոմին կից Պարտիայի պատմության ինստիտուտի և ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտիական արխիվը՝ «Պարտարխիվը», որտեղ պահվում են շատ արժեքավոր բազմաթիվ նյութեր ու վավերագրեր հայ ժողովրդի ռեյուցիոն շարժումների, ինչպես նաև Հայաստանի Կոմունիստական պարտիայի փոփոխ պատմության վերաբերյալ:

ՍՄԿՊ կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի պարտիական արխիվը կազմակերպվել է 1920 թ. դեկտեմբերին, այդ ժամանակից էլ սկսվել է պարտիական փաստաթղթերի պահպանման գործը: Ներկայումս արխիվում պահպանվում է 3804 ֆոնդ, որոնցից 3536-ը պարտիական ֆոնդեր են, իսկ 268-ը՝ կոմերիտական: Այդ ֆոնդերը պարունակում են 403713 պահպանման միավորներ, որոնցից 335 097-ը՝ պարտիական ֆոնդերի գծով և 68816-ը՝ կոմերիտական ֆոնդերի գծով:

«Հայաստանի Կոմունիստական Պարտիայի կենտրոնական Կոմիտե» ֆոնդը պարունակում է Հայաստանի ԿՊ կենտկոմի բոլոր համազումարների, պլենումների և բյուրոների արձանագրությունները, սղագրական հաշվեհազարները, ՍՄԿՊ կենտկոմի և ՀԿ կենտկոմի դիրեկտիվները և դիրեկտիվ ցուցումները, ՍՄԿՊ կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի որոշումներն ու նամակները, ՍՄԿՊ կենտկոմի և ՀԿ կենտկոմի հրահանգները, ՀԿ քաղկոմ-շրջկոմների կոնֆերանսների, պլենումների և բյուրոների արձանագրությունները և սղագրու-

թյունները, ռեսպուբլիկական, բազաբային և շրջանային ակտիվի ժողովների՝ արձանագրությունները, պարտիական, սովետական, պրոֆմիտիբենական, կոմերիտական և տնտեսական կազմակերպությունների ղեկուցադրերը, հաշվետվութայիններն ու ինֆորմացիաները՝ ռեսպուբլիկայի պարտիական, տնտեսական և կուլտուրական շինարարության մասին, պարտիական կազմակերպութայինների համագումարների և կոնֆերանսների վերատուգիչ և մանդատային հանձնաժողովների հաշվետու ղեկուցադրերը, պարտիական կազմակերպութայինների համագումարների և կոնֆերանսների հասցեով ստացված ողջույնները և այլն:

Հաջորդ մեծ ֆոնդը «Հայաստանի Լենինյան Կոմունիստական Երիտասարդական Միության Կենտրոնական Կոմիտե» ֆոնդն է: Դա մի հարուստ աղբյուր է Հայաստանի Լենինյան Կոմունիստական Երիտասարդական Միության պատմությունն ուսումնասիրելու համար:

«Պարտիայի պատմություն» ֆոնդի փաստաթղթերը վերաբերում են Հայաստանի և Անդրկովկասի ռեյուցիոն շարժման պատմությանը: Փոնդում պահպանվում են ժանդարմական վարչության շրջաբերականներն ու ղեկուցները Երևանի գավառի գյուղացիական շարժումների, Երևանի գավառային բանտի կալանավորների էլույթի վերաբերյալ, ՌՄԴ-ի կոչեր և պրոկլամացիաներ, որոնք վերաբերում են ուսուցական առաջին ռեյուցիայի ժամանակաշրջանին, հիշողություններ Հայաստանի և Կովկասի ռեյուցիոն շարժումների մասին և շատ ուրիշ պատմական փաստաթղթեր:

Անձնական ֆոնդերից ամենահարուստը Ստ. Եհաննեսյանի ֆոնդն է: Այդ ֆոնդի կարևոր նյութերից է «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» հայերեն աշխատության ձեռագիրը: Փոնդում գտնվում են Եհաննեսյանի բազմաթիվ նամակները՝ ուղղված հարազատներին, ծանոթներին: Հատկապես ուշագրավ են Վ. Ի. Լենինին ուղարկված նամակները: Այստեղ կան նաև Եհաննեսյանի նամակները՝ ուղարկված Ն. Կ. Կրուպսկայային, Հ. Հակոբյանին, Ն. Ն. Կոլեսնիկովային, ինչպես նաև Լենինի նամակները՝ հասցեագրված Ստ. Եհաննեսյանին և Եհաննեսյանի 15 տետրակները, որոնց մեջ կան ձեռագիր հոդվածներ, նշումներ, մեջբերումներ, կարդացած գրքերի կոնսպեկտներ և այլն:

Մեծ քանակությամբ փաստաթղթեր կան նաև Սուրեն Սպանդարյանի ֆոնդում: Այստեղ պահվում են Ս. Սպանդարյանի 115 ձեռագիր նամակները՝ հասցեագրված հարազատներին, Սպանդար Սպանդարյանի նամակները որպես, Սուրեն Սպանդարյանի նամակագրությունը

Վ. Ի. Լենինի, Օրջոնիկիձեի, Ստասովայի հետ, Լենինի նամակը Ռսկի Աթանասովնա Տեր-Օզանեղովային՝ Սպանդար և Սուրեն Սպանդարյաններին նյութական օգնություն ցույց տալու մասին, Ս. Սպանդարյանի նամակագրությունը Եհաննեսյանի հետ և այլն: Սպանդարյանի ֆոնդում պահվում են Ռ. Քաթանյանի, Ա. Մուսվանի, Ս. Խանոյանի, Ս. Ստասովայի, Օլգա Սպանդարյանի, Ն. Կրուպսկայայի հիշողությունները, ինչպես նաև լրագրային քաղվածքներ, հոդվածներ և նամակներ Ս. Սպանդարյանի մասին: Այստեղ են նաև 1906—1908 թթ. «Կայծ», «Նոր խոսք» և այլ թերթերում տպագրված նրա բազմաթիվ հոդվածները:

Հաջորդ ֆոնդը Ալեքսանդր Մյանիկյանի ֆոնդն է: Փոնդում պահպանվում են նրա ավելի քան 100 նամակները՝ հարազատներին, առանձին պաշտոնական անձանց, քաղաքական գործիչներին, թերթերի խմբագրություններին՝ և գրողներին: Արխիվում կան Մյանիկյանի մասին կենսագրական նյութեր, նրա պարտիական անձնական գործը, Մյանիկյանի բազմաթիվ հոդվածների ձեռագրերը և այլն:

Արխիվում պահպանվում են նաև մեր պարտիայի մյուս ականավոր գործիչների՝ Բ. Կոտեյանցի, Ս. Տեր-Պաբրիկյանի, Ս. Կասյանի, Գ. Աթաբեկյանի, Բ. Ղարիբջանյանի, Ա. Մուսվանի, Կամոյի, Ս. Մուսայելյանի, Ղ. Ղուկասյանի, Հովհ. Մարտիրոսյանի, Ս. Խանոյանի, Ավանեսովի, Ս. Ալավերդյանի, Ա. Ամիրյանի, Հ. Կամարիի, Բ. Հարությունյանի, Մ. Մելիքյանի («Գիղուշկա») անձնական արխիվները: Արխիվում են պահվում նաև Ալեքսանդրովի, Ղարսի, Կաղվանի, Մարիդամիչի, Գիլիջանի, Իշևանի, Եամշաղիյի, Զանգեզուրի, Ղարաբաղի, Նոր-Բայազետի ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպությունների ֆոնդերը, «Սպարտակ» երիտասարդական կազմակերպության ֆոնդը, Լոռի-Փամբակի դավառի ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպության ֆոնդը, բանտարկված և գնդակահարված կոմունիստների ցուցակները, Բաքվի 26 Կոմիսարներին վերաբերող փաստաթղթերի ֆոնդը, ինչպես նաև Անդրկովկասի ու Հայաստանի ռեյուցիոն շարժման պատմությանը վերաբերող գոյումենալ նյութեր:

* *

Ներկայումս Սովետական Հայաստանում գործում են երեք Պետական Կենտրոնական արխիվներ՝ Պատմական, Հոկտեմբերյան ռեյուցիայի և սոցիալիստական շինարարության ու Ֆոտո-ֆոնո-հիլմ վավերագրերի: Բացի դրանից, գործում են Լենինականի, Կրոպսկայի և Դիլիջանի քաղաքային արխիվները, 34 շրջանա-

յին և բազմաթիվ գերատեսչական և հիմնարկ-
 ձևաբարությունների արխիվները: Իր առանձ-
 նահատուկ տեղն ունի Հայկական ՍՍՌ Մինիս-
 տրըների Սովետին առընթեր Մատենագարանը՝
 մեր ժողովրդի հնագույն պատմության այդ
 թանկարժեք գանձարանը: Խոշոր բանակույթյամբ
 արժեքավոր նյութեր են պահվում մեր սե-
 պուրիկայի Պարտիական արխիվում, ինչպես
 նաև Գրականության ու արվեստների պատմու-
 թյան թանգարանում:

Սովետական Հայաստանի արխիվները խո-
 շոր աշխատանք են տանում ոչ միայն հնից մեզ
 հասած ժառանգությունը և սովետական ժամա-
 նակաշրջանում գոյացած արխիվային նյութերը
 հավաքելու և խնամքով պահպանելու, այլև
 դրանք կարգավորելու, մշակելու, գիտականո-
 րեն ուսումնասիրելու և գործնական նպատակ-
 ներով օգտագործելու ուղղությամբ: Մեր կենտ-
 րոնական արխիվների աշխատանքը թույլ է տա-
 լիս ստեղծել, որ նրանք արդեն դարձել են գի-
 տա-հետազոտական լուրջ հիմնարկներ: Ռես-
 պուրիկայի արխիվների աշխատողները, մեր
 գիտնականների հետ համագործակցելով, հրա-
 տարակել են վավերագրերի և նյութերի մի
 շարք արժեքավոր ժողովածուներ:

Հայաստանի Պետական արխիվները մեծ օգ-
 նություն են ցույց տալիս գիտական աշխատող-
 ներին: Արխիվների ընթերցասրահներում աշ-
 խատում են մեր և եզրայրական սևապուրիկա-
 ների հարյուրավոր ուսումնասիրողներ, գիտու-
 թյան թեկնածուներ ու դոկտորներ, որոնք ար-

խիվային նյութերի հիման վրա գրել են բազ-
 մաթիվ մենագրություններ, գիտական հոդված-
 ներ, պաշտպանել են դիսերտացիաներ և այլն:

Պետական արխիվների գործունեության կա-
 րևոր բնագավառներից մեկն էլ տեղեկատու
 աշխատանքն է, որն առանձնապես մեծ ծավալ
 ստացավ թուշակավորման մասին ՍՍՌՄ Մինիս-
 տրների Սովետի նոր օրենքի կիրառման կա-
 պակցությամբ: Վերջին տարիների ընթացքում
 մեր սևապուրիկայի Պետական արխիվները դա-
 նազան հիմնարկներին ու բազաբացիներին
 տվել են տասնյակ հազարավոր արխիվային տե-
 ղեկանքներ:

Արխիվային շինարարության հետագա բա-
 րելավման համար խոշոր նշանակություն ունե-
 ցավ 1958 թ. օգոստոսի 15-ին ՍՍՌՄ Մինիս-
 տրների Սովետի կողմից հաստատված «ՍՍՌՄ
 Պետական արխիվային ֆոնդի կանոնադրույու-
 նը», որը փաստորեն Սովետական Միության
 Կոմունիստական Պարտիայի XX համագումարի
 որոշումների կոնկրետացումն էր արխիվաշինա-
 բարության բնագավառում: Այդ նոր կանոնա-
 դրության համաձայն, երկրի Պետական կենտ-
 րոնական արխիվները դասվում են գիտա-հե-
 տազոտական հիմնարկների շարքը: Այդ կանո-
 նադրությունը արտահայտում է Կոմունիստա-
 կան պարտիայի և Սովետական կառավարու-
 թյան չերմ հոգատարությունը արխիվային գոր-
 ծի նկատմամբ:

Վ. ՔԱԼԱՇՅԱՆ, 2. ԳՐԻԳՈՐՅԱՆ,
 Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ